

ՀՍԽՍՀ ԶՈՂԺՈՂԱՆՈՒՄ

ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍԱԿԵՆ ՀԵՆՐԵՄԵՏՉԵԼԻ
N 15 (115) ԳՐԵԳՐԵՆ № 45 (145)

619

Հ-42

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ
Մ Ի Ն Ի Մ Ո Ւ Մ

10.06.2013

5577

619

30 JUL 2010

2-42

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԱԿՄԱՑ

W

ԳՅՈՒՂՈՑՆՑՆԵՍԱԿԱՆ ՀՈՆՐԱԾՈՑՁՅՒՆ

№ 45 (145)

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

№ 45 (145)

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ
Մ Ի Ն Ի Մ ՈՒ Մ

Յեղիորդ լրացված հրատարակություն

1991



3482608

И. А. Мещеряков
Ученый

ՅԵՐԵՎԱՆ

15095-57

Պատկերապատկեր
Պատկեր 6938 (Բ)
Հրատարակ. 1898
Պատկեր 4999
Տեղաթ 6000

ԳՐ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԻՆՁ ԵՆՔ ԿՈՐՑՆՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ
ՀԻՎԱՆՂԱՐԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ**

Գյուղատնտեսական անասունների մահացութեան և հիվանդութիւնների հետեւանքով իջնում ե նրանց արդյունատուութիւնը և այդպիսով մեր անասնապահութիւնն ամեն տարի մեծամեծ վնասներ ե կրում :

Միութենական Հողօտղիւմատի տվյալների համաձայն, 1928 թվին հիվանդացել ե 82 միլիոն գլուխ անասուն, վորն անասունների ընդհանուր քանակի 30 տոկոսն ե. այդ հիվանդացածներից ստակել են 20 միլիոն գլուխ կամ 7-8 տոկոսը :

Նույն տարին անասունների ընդհանուր արժեքն յիղել ե 9 միլիարդ ուրբլի, իսկ հիվանդութիւնից մահացածների արժեքը՝ 520 միլիոն ուրբլուց ավելի :

Եկթե վերջինից Հայաստանի 1930 թվի տվյալները, կտեսնենք նույնպես շատ անմխիթար պատկեր : Անցյալ տարի մեզանում վարակիչ հիվանդութիւններով տառապել են 17.000 գլուխ անասուն, վորոնցից ստակել են 1630 գլուխ : Եկթե անասունի միջին արժեքը հաշվելու լինենք 200 ո., կտեսնենք, վոր անասունների մահացութեան հետեւանքով մեր ժողովրդական տնտեսութեան կրած վնասը կկազմի 326 հազար ուրբլի : Մնացած անասունները, թեև առողջացել են, սակայն հիվանդութեան

ընթացքում իրենց արդյունավետությունը կորցրել են անվազն 15 որով, վոր նմանապես շատ խոշոր կորուստ է:

Այլևի մեծ թվով անասուններ նույն 1930 թվին սառապել են վոչ վարակիչ (պարզ) հիվանդություններով, Հայաստանի շրջանային անասնաբուժարանները նույն տարվա ընթացքում ընդունել են ընդամենը 101 հազար գլուխ հիվանդ անասուն: Օկթե դրանք հիվանդություն հետևվանքով իրանց արդյունավետությունը կորցրած լինեն հինգ որով, այս դարձյալ անասնապահության համար հարյուրավոր հազարների վնաս է:

Սակայն մեր անասունների հիվանդություն և մահացություն դեպքերն արձանագրված են միմիայն այն շրջաններում, վորտեղ յեղել են անասնաբուժներ. շատ շրջաններ և դյուղեր տարվա ընթացքում մնացել են անասն անասնաբուժական սպասարկության և այդ վայրերում տեղի ունեցած հիվանդությունները և մահացությունը մնացել են ստանց արձանագրելու և մեր հաշվի մեջ չեն մտնում: Այսպիսով տեսնում ենք, վոր Հայաստանի անասնապահության 1930 թվին կրած կորուստը հասնում է մեկ միլիոն ութըրու, գուցե և ավելի:

Այդ կորուստների դիտավոր պատճառներն են անասնապահական տնտեսությունների անհատական-մանր և բաժան-բաժան լինելը, ցուրտ, խոնավ ու կեղտոտ գոմերն ու ախոռները, անբավարար խնամքը, անկանոն կերակրումը և կերի մշտական պակասը:

Հետևյալը, հիվանդությունների թիվը պակասեցնելու և անասուններին կորուստից ազատելու միակ ուղիղ ճանապարհը այդ մանր, անհատական տնտեսությունների միացումն է խոշոր կալիկոթի և խորհրդային

տնտեսությունների մեջ, վորտեղ կան անասունների հիվանդություն և մահացություն դեմ պայքարելու նպաստավոր պայմաններ: Անասնապահական և անասնաբուժական ձեռնարկումները խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում տալիս են անհամեմատ լավ արդյունքներ, քան անհատական տնտեսություններում:

Անհատական վորք տնտեսության մեջ անասունների կենդանի քաչն ու արդյունավետությունը ընդհանրապես շատ ցածր է. չնայած այն մեծ աշխատանքին, վոր թափվում է յուրաքանչյուր կենդանու պահպանման վրա, նրանից ստացվում է այնքան թիչ արդյունք, վոր նույնիսկ չի արդարացնում դրա համար ծախսված աշխատանքը:

Նույնն է և անասնաբուժական սպասարկության տեսակետից: Անասնաբուժը ցան ու ցրիվ, մանր տնտեսությունների մեջ աշխատելիս, բավարար արդյունք չի տալիս, վորովհետև նախ՝ իբ ժամանակի մեծ մասը կորցնում է մի տնտեսությունից մյուսը տեղափոխվելու համար, ապա ցանկանալով ամեն կողմ հասնել՝ ստիպված է լինում աշխատանքի ընթացքում չավազանց շտապել և, վոր դիտավորն է, շրջանի կամ նույն իսկ դյուղի մասշտաբով մասսայական առողջապահական միջոցներ անցկացնելու հնարավորությունից դուրի է լինում:

Այլ դրույթյան մեջ են գտնվում խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները, վորտեղ անասունների արդյունավետությունը, ինչպես վիաստերը ցույց են տալիս, անհամեմատ բարձր է և անասնաբուժական ուղեություն ել արդյունավետ է դառնում, վորովհետև այստեղ հընարավոր է լինում նախ կիրառելու անասունների առող-

Չապահանջան կանոնները և նրանց սրաշտպանել վարակիչ հիվանդութիւններէից, ապա և պետք յեղած դեպքում անասնաբուժական ոչնտութիւնն ցույց տալ:

Խորհրդային և կողքեկտիվ տնտեսութիւններն առաջիկայում միշտ պետք և ձգտեն վող միայն առաջացած հիվանդութիւնները կասեցնել, այլ և անասունների համար ստեղծել այնպիսի պայմաններ, վոր նրանք սրաշտպանված լինեն թե վարակիչ և թե այլ հիվանդութիւններէից, միշտ հիշելով, վոր ավելի հեշտ և և ձեռքնտու հիվանդութիւնից պաշտպանվելը, քան այն բժշկելը:

Ի՞նչ է ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ

Մինիմում բառը նշանակում է՝ ամենաքիչ, նվազագույն: Անասնաբուժական մինիմում ասելով պետք է հասկանալ անասնաբուժական այն նվազագույն պահանջները, վորոնց նպատակն է անասունների առողջապահական վիճակը բարելավելով, նվազեցնել նրանց մահացութիւնը:

Ամենքին հայտնի յեն անասունների հիվանդութեան հետեանքով ժողովրդական տնտեսութեանը հասած վնասները: Գյուղատնտեսութեան և մասնավորապես անասնապահութեան մեծագույն չարիքներից մեկն էլ անասունների վարակիչ հիվանդութիւններն են, վորոնց դեմ կազմակերպված սլաքար մղելը հանդիսանում է անասնաբուժական մինիմումի նպատակը:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Անասունների վարակիչ հիվանդութիւնները կանխելու և նրանց դեմ հաջող պայքարելու համար նախ

պետք է իմանալ, թե ի՞նչ պատճառներ են նպաստում վարակի տարածմանը և ապա՝ ի՞նչ միջոցներով կարելի յե վողնչացնել վարակը:

Վարակիչ հիվանդութիւնները, սովորաբար առաջ են դալիս աչքով անտեսանելի ելակներից, մանրէներից (միկրորեններից), վորոնք մտնելով անասունի կամ մարդու մարմնի մեջ՝ պատճառ են դառնում այս կամ այն հիվանդութեան:

Անասունների վարակվելու ճանապարհները բազմաթիվ են: Յերբեմն վարակը մարմնի մեջ մտնում է հիվանդ կենդանուց անմիջապես (քովելուց, իրար մոտ լինելուց), կամ կերի և ջրի միջոցով (ընդհանուր մտուր, արոտախար, առու կամ աղբոյ խ), կարող են վարակվել նաև միջատների խայթելուց (ճանճ, մոծակ, տիզ և այլն): Բայց վարակիչ հիվանդութիւնների տարածման ամենավտանգավոր աղբյուրը, մեր իրականութեան մեջ, հանդիսանում են անխնամ կերպով դուրս գցած սատկած կենդանիների դիակները:

Վերջապես, վարակիչ հիվանդութիւնների վարագրմանը մեծ չափերով նպաստում է նաև անասունների վատ պահվածքը (անհարմար դոմերը, ախոռները, վատորակ կերը, նեխված ջուրը) և բաղձաթիվ այլ պատճառներ:

Վերահիշյալ խոշոր պատճառները գրեթե միշտ անպակաս են անհատական, մանր տնտեսութիւնների մեջ: Այլ վիճակի մեջ են գտնվում կողքեկտիվ տնտեսութիւնները, վորտեղ հնարավորութիւն կա թե՛ ընդարձակ ու հարմար դոմեր, ախոռներ շինելու և թե՛ անասուններին կանոնավոր ողտադործելու, խնամելու և կերակրելու:

Ապա ուրեմն, պետք է լավ ծանոթանալ և ուշադրու-

Թյամբ կերպուել նախագրուչական ամենապարզ միջոց-
ները կամ ինչպես վերելում ասացինք՝ անասնաբուժա-
կան միևնույնումի պահանջները, վորոնց իրազործումը,
մանավանդ կոլլեկտիվ անտեսություններն մեջ, դժվա-
րությունների չի կարող հանդիպել:

Վորքան համառ և ճշտորեն կերպովի անասնաբու-
ժական միևնույնումը՝ այնքան ավելի սպասով կլինի տըն-
տեսությունը զանազան վարակիչ հիվանդությունների
վտանգից, սպա ուրեմն և կբարելավվի նրա անտեսու-
կան վիճակը:

**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԻ ՊԱՀԱՆՁ-
ՆԵՐԸ**
Անասնագերեզմանց

Մեները գիտեն, վոր անխնամ և անհող դուրս դցած
դիակը նեկավելով և հոտելով՝ իր շուրջը վարակի և տա-
րածում: Այդպիսի դիակը վարակում և թե հողը և թե
ջրերը: Դիակից թափված վարակիչ հեղուկը (արյուն,
թարախ) չորանալով խտնվում և փոշու հետ և քամու
միջոցով տարածվում հեռու տեղեր: Վայրի դադանները,
չները իրենց հերթին սպառառուելով դիակը, տանում
են նրա վոսկորները և այլ կտորները այս ու այն կողմ
և նույնպես տարածում վարակը: Վարակը տարածելու
լավ միջոցորդների համբալն են վայելում նաև թռչուն-
ները: Վերջապես, ճանճերը և այլ միջատները նստելով
դիակի վրա, իրենց թաթերով վարակը տեղափոխում են
ստորջ կենդանիների և մարդկանց վրա:

Պարզ և ուրեմն, վոր անխնամ կերպով դուրս դցած
մի դիակ (լինի դա խոչոր անասուն, շուն կամ թռչուն՝

միևնույն և) կարող և հարյուրավոր անասունների և
մարդկանց հիվանդանալու պատճառ դառնալ:

Մյս ճանապարհով վարակը չտարածելու համար
անասնաբուժական միևնույնումը պահանջում և, վոր ամեն
մի բնակավայր անպատճառ ունենա հատուկ անասնա-
գերեզմանոց:

Մասնագերեզմանոցի համար պետք է հատկացնել
բարձր, բաց և չոր հողամաս, մեծ ճանապարհներից,
արտավայրերից և ջրերից հեռու: Անասունների չի
կարելի թողնել անասնագերեզմանոց արածելու, ուստի՝
նրանց մուտքը գերեզմանոց արգելելու համար անասնա-
գերեզմանոցի շուրջը պետք է խոր փոս փորել, իսկ յե-
թե հնարավոր է՝ նաև շրջապատել պարիսպով կամ ցան-
կապատով:

Դիակները անասնագերեզմանոց տեղափոխելու հա-
մար անհրաժեշտ է ունենալ հատուկ սայլ, վորն ուրիշ
նպատակների համար չպետք է ոգտագործել, վորովհե-
տեմ դիակը տեղափոխելուց հետո սայլի վրա միշտ մը-
նում և վարակ: Սայլը միջից պետք է պատել թիթեղով,
վորպեսզի հեշտ լինի հաճախակի ախտահանել:

Մասնագերեզմանոցում պետք է միշտ նախորդ
պատրաստված լինեն մի քանի գերեզմաններ, փոսեր,
վորպեսզի դրանց անպատրաստ լինելու պատճառով
դիակը, մանավանդ ամառը, ժամերով բացթյա չմնա:

Դիակները պետք է թաղել յերկու մետրից վոչ պա-
կաս խորությամբ, վորպեսզի վայրի զազանները և շնե-
րը չհանեն և չպատաստեն:

Դիակի մորթին, կաշին առանց անասնաբուժի թույլ-
տվության չպետք է քերթել, մանավանդ սիրիբախ-
տից սասկած անասուններինը, վորովհետև օդադիսի

մորթուց վոչ միայն անասունները, այլ և մարդիկ հեշտութեամբ կարող են վարակվել:

Դիակը դուրս հանելուց հետո, դոմբ կամ ախուրը, նախապես աղբի, ցամքարի և կերի մնացորդները դուրս տանելուց և այրելուց հետո, պետք է մաքրել և ախառահանել:

Այսպես ուրեմն՝ կենդանու դիակը անվտանգ դարձնելու ամենավստահելի միջոցը—այն անասնադերեզմանոցում խորը թաղելն է:

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ՅԵՎ ԶՐԱՏԵՂԵՐԸ

Վարակիչ հիվանդութուններից պաշտպանվելու կարելիոր պայմաններից մեկն էլ արոտավայրերը, ջրատեղերը և ճանապարհները անասունների վոսկորներից, դիակներից և ուրիշ մնացորդներից մաքուր պահելն է: Մահայն հաճախ և պատահում, վոր անասունի դիակը անհոգաբար թողնում են նրա ստակած տեղում—արոտավայրում կամ առվի մոտ և յերբեմն նույնիսկ առվի մեջ ու այդպիսով վարակվում և թե՛ արոտը և թե՛ ջուրը և պատճառ դառնում առողջ անասունների հիվանդանալուն:

Արոտավայրերի և ջրատեղերի առողջապահական պայմանները բարելավելու համար պետք է սկսել հավաքել և թաղել այս ու այն կողմ թափված դիակները, վոսկորները և ուրիշ մնացորդները: Պետք է հավաքել վոչ միայն խոշոր կենդանիների դիակները, այլ և խոզերի, շների, կատունների, դադանների և թռչունների դիակները:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՆՈՐ ԳՆԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Անասուններին վարակիչ հիվանդութուններից պաշտպանելու համար պետք է ժամանակ առ ժամանակ ուշադրութեամբ նրանց ջննել և կասկածելի անասուններին ցույց տալ անասնաբուժին և նրանից խորհուրդներ ու ցուցմունքներ ստանալ: Հնարավորութեան դեպքում, ավելի լավ կլինի, յեթե յերբեմն անասնաբուժինը կամ բուժակը ջննեն ամբողջ հոտը: Այդ յեղանակով միայն կարելի յե վորևե հիվանդութուն յերեվալու դեպքում՝ հիվանդ անասուններին հայտնաբերել և մեկուսացնել, վորպեսպի առողջները չվարակվեն:

Առանձին ուշադրութուն պետք է դարձնել նոր դընած անասունների վրա. դրանց դոնե յերկու շաբաթ պետք է պահել առանձին շենքում և հատուկ դիտողութեամբ տակ:

Այս կանոնը պիտի շատ խիստ կիրառել, վորովհետև նոր դընած կենդանին կարող է ըստ յերեվույթին, տեսքով առողջ յերեվալ, բայց իրոք վարակված լինել: Յերբ անասունը վարակվում է, նա անմիջապես չի հիվանդանում, այլ մի քանի օր (1—2, յերբեմն 3 շաբաթ) անցնելուց հետո: Այս ժամանակամիջոցը կոչվում է հիվանդութեան «թաղուն շրջան», վորը միշտ նկատի պիտի ունենալ օտար տեղից նոր անասուն բերելիս:

Եթե նոր բերված անասունն արդեն վարակված է և յեթե նրան խառնենք ընդհանուր հոտին՝ արոտավայրում կամ կապենք ընդհանուր դոմում, մի քանի սրից հետո նա կարող է թե՛ ինքը հիվանդանալ և թե՛ պատճառ դառնալ մյուսների վարակիչուն:

Այդ շարիքից խուսափելու համար պետք է՝ ա) նոր

անասուններ զենել վարակիչ հիվանդութիւններէց ապահով վայրերում, նախորոք այդ մասին տեղեկանալով շրջանային անասնաբուժից. բ) նոր անասուն զենելիս պահանջել անասնաբուժի վկայական կենդանու առողջութեան մասին, իսկ յետեւ հնարավոր ե՛ անասնաբուժի ներկայութեամբ զենել նրան. գ) նոր զնած անասունին տնտեսութիւն բերելուց հետո գոմ կամ արտո չտանել, այլ յերկու շաբաթ խնամել, կերակրել և ջրել առանձին շենքում: Յետեւ այդ ժամանակամիջոցում նա հիվանդանա, չի կարող տնտեսութեան ժյուս անասուններին վարակել, իսկ յետեւ նույն ժամանակամիջոցում առողջ մնա՛ կարելի յե վատահ լինել, վոր նա առողջ և և ընդհանուր հոտին կամ նախրին խառնելն այլևս վատնազավոր չե:

Այս կանոնի կիրառումը դժվարութիւններ չի ներկայացնում, մինչդեռ ոչուտը շատ մեծ ե՛ ապահովելով տնտեսութիւնը մեծ շարիքից:

ՀԻՎԱՆԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ

Վերոհիշյալ միջոցները, այլ և անասունների կանոնավոր խնամքը, կերակրումը և ողտադործումը հնարավոր են դարձնում կանխելու զանազան վարակիչ հիվանդութիւններ: Սակայն կան վարակի տարածման նաև մի շարք աննկատելի ճանապարհներ, վորոնցով տնտեսութեան մեջ կարող ե անսպասելի կերպով յերեվան դալ այս կամ այն վարակիչ հիվանդութիւնը:

Այդպիսի դեպքում հիվանդութիւնը կասեցնելու, կանխելու համար պահանջվում են շուտափութ և վրձնական միջոցներ, և վորքան շուտ ձեռք աննին այդ միջոցները, այնքան արդյունավետ կլինի հետևանքը:

Դրա համար կանոնավոր կազմակերպված տնտեսութիւններում անասուններին խնամողները և կերակրողները պետք ե լինեն հատուկ նշանակված մարզիկ, վորոնք, բացի խնամքի և կերակրման կանոնները զիջանալուց, ճանաչեն վարակիչ հիվանդութիւններին նշանները և կարողանան անասնաբուժական առաջին ուղնութիւնը ցույց տալ:

Վարակիչ հիվանդութիւն հայտնաբերելու կամ կասկածի դեպքում կարեւորագույն պայմանն ե՛ հիվանդ և կասկածելի անասուններին անմիջապես ընդհանուր հոտից կամ գոմից հեռացնել, և առանձին տեղ պահել. հետո՛ նույն շենքից դուրս հանել լոբբ, առյուծի վրայ թողնել միայն շենքը մաքրելուց ու արտահանելուց հետո:

Վարակիչ հիվանդութիւնների կասկածելի նշաններ պետք ե համարել.

ա) Յերբ միաժամանակ մի քանի անասուն հիվանդանում են միևնույն նշաններով:

բ) Յերբ անասունն առանց նկատելի պատճառների հանկարծ հիվանդանում ե, տաքութիւնը բարձրանում ե, բերնից լորձուք ե ծորում, արյունախտան դարձնում ե նկատվում, ընդհանուր կացութիւնը ճնշված և արտուր ե լինում:

գ) Յերբ կենդանին հանկարծամահ ե լինում կամ մի քանի ժամ հիվանդանալուց հետո սատկում ե:

Այդպիսի դեպքերում հիվանդ և կասկածելի կենդանիներին մեկուսացնելուց հետո, անմիջապես պետք ե դիմել անասնաբուժին կամ բուժակին, վորը հիվանդութիւնը վորոշելով՝ անհրաժեշտ ցուցմունքներ կտանրա առաջն աննելու համար:

ՎԱՐԱԿՎԱԾ ՇԵՆՔԻ ԱՆՏԱՀԱՆՈՒՄԸ

Այն շենքը, վորի մեջ վորևէ անասուն է հիվանդացել կամ սատկել, անհրաժեշտ է մաքրել և ապա արտահանել:

Գրտ համար պետք է հավաքել ու դուրս առնել աղբը և կեբի մնացորդները և, յեթե պարզվի, վոր անասունը սատկել է սիրիլրախտից, այրել կամ անամաղբերկամանոցում թաղել: Ուրիշ հիվանդությունների դեպքում աղբը կարելի չէ ոգտադործել, յեթե աղբակույտը վերելից ծածկվի դարմանով, և ապա հողով կամ ավազով: Մի յերկու չարաթվա ընթացքում տաքացած աղբի մեջ վարակը վոճչանում է և ախուհետել առանց յերկյուղի կարելի չէ աղբն ոգտադործել իբրև պարարտանյութ:

Շենքերն արտահանելու համար դործ են անում դանազան քլոխական լուծույթներ, վորոնցից ամենազործածականը՝ կրակաթն է: Կրակաթ պատրասելու համար պետք է վերցնել մի մաս թարմ հանգրած կիր և լավ խառնել 10—12 մաս ջրի մեջ. կրակաթով կարելի չէ սպիտակեցնել նաև սլատերը, յեթե լուծույթն ավելի թանձր պատրաստված լինի (1 մաս կիր և 3—4 մաս ջուր):

Բացի դրանից, արտահանության համար զբոծածում են կարբոլյան թթվի և կամ կրեոլինի լուծույթ (1 մասը՝ 20 մաս ջրի մեջ լուծված) սուլեմայի քուծույթ (1 մասը՝ 500—1000 մաս ջրի մեջ). մասնալորային դարաղի դեմ շատ վտահելի չէ համարվում ֆորմալինի լուծույթը (1 մասը՝ 100—200 մաս ջրի մեջ):

Միտահանելուց առաջ շենքը պետք է լավ մաքրել և, վորպեսզի փոշի չբարձրանա, լավ է նախորոջ օս-

տերը և հատակը առատորեն թրջել կրակաթով կամ մոխրաջրով:

Սյգ ձեկով մաքրելուց հետո, պատերը, հատակը և շենքի մեջ դտնված բոլոր առարկաները սրսկում են արտահանիչ լուծույթով: Սրակելու համար կարելի չէ զբոծածել սովորական դյուղատնտեսական սրսկիչ, վորը դործածվում է խաղողի վաղբը բժշկելու համար:

Արտահանությունից հետո շենքի դռները և պատահանները պետք է բաց թողնել 5—6 օր, վորից հետո միայն կարելի չէ շենքը վարակման տեսակետից անվտանգ համարել:

Միտահանությունը ամենախարեվոր միջոցն է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու համար, ուստի այն պետք է կատարել մեծ ուշադրությամբ, ճշտությամբ և անասնարուժի ցուցմունքներով:

Անկանոն կատարած արտահանությունը յերբեք իր նպատակին չի ծառայում:

Անկախ այն հանդամանքից, թե հիվանդանալու դեպքեր պատահել են, թե վոչ, կանոնավոր կազմակերպված անտեսություններում ինքնապաշտպանության նպատակով, անասունների և թռչունների շենքերը պետք է արտահանել տարեկան դռն 2 անգամ: Այլ և պետք է պատերը սպիտակեցնել և հետևել մշտական մաքրությունը՝ չթողնելով, վոր դոմում աղբի կուտակում և մեղի լճացում առաջանա:

ԼԱՎ ՏԱՎԱՐԱԾԻ ՅԵՎ ՉՈՒԱՆԻ ԴԵՐԸ

Նախիրը և հոտը դանազան հիվանդություններից պաշտպանելու համար շատ մեծ դեր ունեն կատարելու տավաքածն ու չորանը:

Նախերն ու հոտը տարվա մեծ մասը անց են կացնում արոտավայրում, վրտեղ անասուններն իբրև հետ մշտական շինման մեջ լինելով՝ գտնվում են վարակվելու համար նպաստավոր պայմանների մեջ: Բացի դրանից, յեթև արոտավայրում հայտնաբերվում է փոքրէ վարակիչ հիվանդություն, արոտավայրը ևս վարակվում է, և այնուհետև ամբողջ հոտը մեծ վատնող յե մասնավում: Ապա ուրեմն վորքան հմուտ և հեռատես պետք է լինի անասուններին արածացնողը, փոր միշտ խուսափի անսպասելի չարիքից:

Գյուղացիության մեջ սխալ հայացք է տարածված տավարածի կամ չորանի պարտականությունների մասին: Սովորաբար այդ պաշտոնին նշանակում են ամենա անընդունակ մեկին, իսկ շատ անգամ՝ նույնիսկ ազուր կամ միամիտ մարդկանց, յենթադրելով, վոր նրա պարտականությունները շատ պարզ են և հեշտ, այսինքն պետք է միայն հսկի, վոր հոտից անասուն չկարջի:

Մին ինչ նույն գյուղացիությունը 500 ուսուցիչ պարունակող հասարակական դրամարկղը յերբեք չի համարձայնի հանձնարարել մի միամիտ մարդու հսկողությանը՝ կասկածելով, վոր սխալմունքի կամ միամտության հետևանքով կարող է դրամը պակասել կամ կորչել: Մինչդեռ, 150—200 դուրս, իսկ յերբեմն և ավելի մեծ հասարակական հոտը, վոր տնտեսության կենդանի դրամարկղն է և տասնյակ հազարների արծեք ունի՝ գիտակցաբար հանձնում է միամիտ մարդու:

Մին ինչ, լավ չորանը պետք է հոտի իսկապան ասումարդը լինի և կարգադրիչը. նա լավ օւսումնասիրած պետք է լինի արոտավայրը և դիտենա, թե


վորտեղ կարելի յե պահել հոտը, ո՞ւր և յե՞րբ տեղավորել, ի՞նչ տեղերից պետք է խուսափել: Չորանը պետք է սիրի անասուններին և դիտելով՝ հասկանա անասունի մեջ նկատված փոփոխությունը. նա իր փորձված աչքով ամբողջ հոտի միջից պետք է անմիջապես նկատի հիվանդ անասունին և իսկույն նրան առողջներից առանձնացնի: Վերջապես նա պետք է ծանոթ լինի վարակիչ հիվանդությունների նշաններին և դիտենա անասնաբուժական սկզբնական ոգնություն ձևերը:

Պարզ է ուրեմն, վոր տավարածի կամ չորանի ընտրությունը պետք է կատարել մեծ ուշադրությամբ և հոտի հսկողությունը հանձնարարել ընդունակ և վստահելի մարդու:

1691
Լավ չորան կամ տավարած ունենալու համար նպատակահարմար է նախորոք մի ամսով ուղարկել ներան չրջանի անասնաբուժարանը, վորտեղ նա մասնադետից կարող է սովորել անասունների առողջապահության տարրական կանոնները, հիվանդություններին նշանները և առաջին ոգնություն ցույց տալու յեղանակը:

Առանց այդպիսի գիտությունների, տավարածը կամ չորանն յերբեմն առաջին ոգնությունն է հասցրնում «ըստ իր հայեցողության» և հաճախ փոխանակ հոնքը չինելու, աչքն էլ է հանում:

Սրանք են անասնաբուժական մինիմումով նախատեսված կարևորագույն պահանջները գյուղացիության և իշխանության տեղական մարմինների համար: Եթե այդ տարրական պահանջները ճշտվ և անխախտ կիրառվեն՝ անասունների և վարակիչ հիվանդությունները մոտիկ ապագայում կզատվեն և կարգավորվեն:



15095-57

ԽՈՐՀ. ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ

Այժմ որ ըստ որե աճում են կոլեկտիվ և խորհ. տնտեսությունները, վորոնք այլևս չեն սահմանափակվում միմիայն անասնաբուժական միխիմումով, այլ իրենց համար պարտադիր են համարում անասուններին վարակիչ հիվանդություններից պաշտպանելու համար դործադրել մի շարք անասնաբուժական այլ միջոցներ:

Այդ միջոցներն են՝

1. Առանց անասնաբուժի թույլտվութեան հիվանդ անասունը չծախել և չմորթել իրբև մասցաւ:
2. Արգելել հիվանդ անասուններին խնամող բանավորների մուտքը առողջ անասունների մոտ:
3. Անասնաբուժի միջոցով պարբերաբար ստուգել և քննել անասունների առողջությունը:
4. Անասուններին մշտապես մաքրել և նրանց դրայի տիգերը հավաքել:
5. Անասուններին չափով կերակրել և կերի վորակը միշտ ստուգել:

6. Ջրելու համար ընդհանուր դուշեր չգործածել:

7. Անասնաբուժական հարցերը տնտեսութեան կուլտ-կրթական աշխատանքի ծրագրի մեջ մտցնել:

Անասնաբուժական միխիմումի պահանջները ալելի ևս խստանում են հատուկ անասնաբուժական խորհ. տնտեսությունների և կուլտնասությունների համար:

Վորոնք են այդ պահանջները:

Անասնաբուժական տնտեսութեան համար հատկացրած հողամասը պետք է քննութեան յենթարկել անասնաբուժական տեսակետից:

Անասնաբուժական տնտեսութեան համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի հողամաս, արոտավայր և ջրատեղ, վորոնք պահանջով լինեն այլ և այլ վարակներից:

Շատ դեպքերում հողամասի ընտրութեանը շատ անհաջող է լինում և վնասակար հետևանքներ ունենում: Այսպես, որինակ՝ մոտիկ անցյալում, վոչխարաբուժական տնտեսություններից մեկը ճահճոտ և ձիճոռներով վարակված հողամասի վրա հիմնելով իր տնտեսութեանը՝ կարծ ժամանակամիջոցում վոչխարները կեսը կորցրեց:

Այդպիսի չարիքներից խուսափելու համար, անհրաժեշտ է հողամաս ընտրելիս անպատճառ խորհրդադակցել չրջանային անասնաբուժի հետ, վորովհետև նա միշտ տեղյակ է թե իր չրջանի վոր տեղերում են նկատվում այս կամ այն վարակիչ հիվանդությունները:

Նույնպես և անասունների համար նոր շենքեր կառուցելիս պետք է անասնաբուժի հետ խորհրդակցել, վորովհետև շենքի բարձրութեանը, լույսը, հասակը, ուղի ծախվալը, մսուրների դիրքը և ուրիշ, ըստ յերևույթին վորք պայմաններ, մեծ ազդեցութեան ունեն անասունների առողջական դրութեան և նրանց արդյունավետութեան վրա:

Իացի դրանից, խորհ. և կու. տնտեսութեանում, անասունների կերակրման և ողտազորման կանոնների հետ զուգընթացաբար պետք է կիրառվեն առողջապահական կանոններ՝ անասուններին մաքրելու, խնամելու, կթելու ձևի և այլնի նկատմամբ:

Միմիայն այդ պայմաններում տնտեսութեանը կարող է տալ առավելագույն արդյունքը և պահպանել իր անասունների առողջութեանը:

Անասնաբուժական միխիմումը պահանջում է նաև, վոր անասուններին խնամող բանվորները ծանոթ լինեն խնամքի կանոնների և անասնաբուժական ընդհանուր հիմունքների հետ, և վոչ թե պատահական մարդիկ, լինեն, ինչպես հաճախ տեսնում ենք ներկայումս :

Մերջապես ցանկալի յե, վոր խոշոր անասնաբուժական խորհ. անտեսությունները և կոլտեսությունները ապահովված լինեն մշտական անասնաբուժով կամ գոնե անասնաբուժակով : Այդպիսի անտեսությունները պետք է ունենան անասնաբուժարան՝ իր դեղատոնով և առանձին շենք—մեկուսարան, կասկածելի էր կամ վարակիչ հիվանդ անասուններին մեկուսացնելու համար :

Սակայն միմիայն խորհ. և կոլ. անտեսությունների կողմից անասնաբուժական միխիմումի կիրառումը չի կարող կատարելապես ապահովել և պաշտպանել անասուններին վարակիչ հիվանդություններից, վորովհետև կան մի շարք արդյունաբերական կազմակերպություններ, վորոնց գործունեությունը՝ կապված լինելով անասունների և հումուսթի մթերման ու վերամշակման հետ՝ նույնպես պահանջում է անասնաբուժական հատուկ կանոնների գործադրում :

**ՄԹԵՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄԸ**

1. Անասունների և հումուսթի մթերման ծրագրի մասին նախորոք պիտի իրադեկ անել անասնաբուժական վարչությանը, վորպեսզի մթերման վայրերը վերջի-

միս կողմից հատուկ հեկուպության և ուլտրաթյան առնվեն :

2. Շեթե մի վորևե վայրում դոյություն ունի անասունների վարակիչ հիվանդություն, մթերողները անվիջապես պետք է դադարեցնեն մթերումները :

Սակայն, դժբախտաբար, պետք է խոստովանել, վոր այս հիմնական կանոնը հաճախ խախտում են մթերող կազմակերպությունները, աչքի առաջ ունենալով միայն իրենց ձեռնարկության շահերը և հաշվի չառնելով միասակար հետևանքները : Բացառիկ չեն այնպիսի դեպքեր, յերբ այդպիսի կազմակերպությունները, հակառակ անասնաբուժական հսկող արգելքին՝ դիմում են իշխանության բարձրագույն մարմիններին և հաղար ու մի պատճառարանություններով խնդրում են թույլատրել շարունակել մթերումները :

3. Մթերողները պետք է հողան, վոր անասնահումաբատեղերը և հումուսթի պահեստներն ապահովված լինեն հատուկ և նպատակահարմար շենքերով :

4. Մթերած անասունների մեջ կասկածելի հիվանդություն հայտնաբերելիս՝ պետք է հիվանդներին առանձնացնել և ապա զիմել անասնաբուժին՝ հիվանդության բնույթը վորսչելու և միջոցներ ձեռք առնելու համար :

5. Կոնարահտացիայի կարգով մթերվող անասունների նկատմամբ՝ պայմանադրի մեջ հատուկ կետով պետք է նախատեսել, վոր անտանառերը պարտավոր են կատարել անասնաբուժական հսկողության պահանջները :

ԱՆՈՍՆԱՐՄՈՒԺԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Անասունները վարակիչ հիվանդութիւններից պաշտպանելու համ նրանց դարդացման առաջն առնելու համար, բացի անասնաբուժական միջոցումի պահանջների կիրառումից, պետք է կաղամակերպել նաև անասնաբուժական կանոնաւոր սպասարկութիւն և այն մտտեցնել խորհ. և կոլ. անասնութիւններին:

Վորքան շատ լինեն անասնաբուժներ և անասնաբուժակներ և վորքան անասնաբուժարանները լավ ապահովված լինեն գործիքներով, դեղորայքով և տեղափոխութեան միջոցներով, այնքան քղալի կլինի անասնաբուժութեան տված ոգուտը:

Խորհրդային Հայաստանի սահմաններում ներկայումս աշխատում է 25-ի մոտ անասնաբուժ և մոտ 30 անասնաբուժակ: Ամեն մի անասնաբուժի ընկնում է 50-60 հազար զլուխ անասուն. պարզ է, վոր վոչ մի անասնաբուժ հնարավորութիւն չի ունենա կանոնաւոր կերպով սպասարկել այդ քանակութեան անասուն: Այժմ ամեն մի հիվանդ անասուն բժշկելու համար ծախսվում է 4-6 կոպեկ, այն ինչ անհրաժեշտ է 30-35 կոպեկ:

Այս ուրեմն, անհրաժեշտ է բարելավել անասնաբուժական սպասարկութիւնը՝ ավելացնելով մասնագետների թիվը և համակցելով տեղական բյուջեյից բաւարար միջոցներ: Արդարեւ ծախքերը միանգամայն կարողարացնեն կործանող փրկելով հազարավոր զլուխ անասուններ:



« Ազգային գրադարան



NL0266920

№ 15 400. (3/4 с.)

8577



Г. АРУТЮНЯН

ВЕТЕРИНАРНЫЙ МИНИМУМ

Госиздат ССР Армении
Эривань 1931